առնել տաք, որոյ հրամանաւ է. զու կ'առնես զկարգն, թէ չէ ես զիմ զիտածն առնեմ. եւ նա երթայ եւ զկարգն առնէ։ Եւ յորժամ չար իշխանքն ի ճաշոյին եկան և ի վերայ տախտակին նստան, երթայ Ըռէճէպն եւ գանկատի նոցա եւ նոքա հրամայեն սաստիկ պա-ռաչելով թէ Ո՞վ է որ զքեզ արգելու, թէզ գնա՛ եւ սպասաւորութիւն արէ։ Մինչև զձայնս նոցա լսաք մեք ի ժամատեղին և այլ բազում հայհոյութիւն հա-նեալ ի բերանոցն։ Եւ անդ կային ժողովուրդք ի ժամ եկեալ. նոքա զնոսա արհամարհեն եւ նախատեն թէ կու արգելոյք զժամն եւ ոչ թողոյք թոյլ լսել կամ զաղօթսն առնել, եւ որ աւարտի ժամն՝ գնացէք ա-բարէք[1]) զինչ և կամիք, ո՛վ լիրբք և չարք. և նոքա յամօթի հարեալ այլ ոչ խօսին։ Եւ տեսաք զի եկն Ըռէճէպն և մտեալ ի պահարանն զի զգեցցի զշապիկն սպասաւորութեան եւ ոչ եգիտ շապիկ։ Եւ ի պատա-րագն յիշատակեցին զՑակոբ կաթողիկոսն ըստ հրա-մանացն Եղիազար վարդապետին. և ի ժամ յիշատա-կելոյն Էսիլի թոռն անդ էր ընդդէմ քահանայիցն մեր դասին. ասէ ուրախութեամբ թէ Ահա՛ զբեռն այսպէս կու ոլորեն. իբր թէ ասել է այս թէ Մեք մուշավէրէ եւ խորհուրդ արարաք Գ եւ Դ եկեղեցի, որ ի Մար-տիրոս վարդապետէն գանկատ զրէաք եւ զվարդա-պետսն աստի վեր առնէաք եւ յիշատակել տայաք զՑակոբ կաթողիկոսն. նա՛ յերկիւղէ[2]) զայս իմացեալ՝ յառաջագոյն իւրեանք յիշել ետուն. այս եղեր խոր-հուրդ նոցա։ Եւ յետ ժամուն գնացի ի յԱստուածա-ծին, եւ անդ էին վարդապետքն և բազում խօսս ե-ղեալ անդ, և ելեալ եկի. և Մարտիրոս վարդապետն էր ժամարար։ Երեկոյիս ընդ Մղտեսուն ի Սուրբ Գէ-որք ի տուն Մղտեսի Եաղուպին, և նա մատաղ արա-բեալ վասն եղբօրն։

1) առէր. 2) յիւրկիւղէ.